

ԾՆՆԴԵԱՆ ՏՕՆԻ ԱՌԹԻԻ

ՄԻ ՆԱԽԱԿ

Պատիւներու արտակարգ
Ներքեւ ննջող բանաստեղծն
Ընդ երկար դեռ տայ պիտի
Մից նորանոր քերթուածներ.
Նուիրական իւր շիրմէն
Բուրե՛ անոյ՜ բոյր վարդից,
Էւ իր օրհնեալ դազադէն
Թուռնք թուլին հոյլ ի հոյլ:

Ա

Երկու ամաց ի հետէ կայսրն ի Սուրբ Հեղինէ
Խամրեց թռչեց իր շունչով ժանտ կըլիմայն մահաբեր.
Նա օր օրի կը կթի. և ի հեճուկըս խնամոց
Ո՛ր Մէտրա բժշկին՝ ինքն ամեն օր զինքն ուտէ:
Գոհ մընացէ՛ք և ուրախ, ո՛վ Թագաւորք բանդապահ.
Նա շատ չ'ապրիր, կը մեռնի, նա չի կրնար դիմանալ:
Այսօր սակայն չէ ա՛յնքան տըխուր ինչպէս է ընդ միշտ.
Եւ ի՛նչ ընել. աշխատի՛լ և պատմութիւնն իւր կազմել:
Ոսկայն Լակազ հոն չէ այժմ, որ Յիշատակն իւր զրէրէ:
Մտածկոտ է, կը ճանչէ կայսերական իւր դիմակ,
Երբ հայելոյն մէջ հայի, լոգանքէ վերջ տեսնէ զինք.
Յետոյ հագնի զգեստներն թեթեւազէն որսորդաց
Կանաչ զգեստն աստղանիշ, իր արծաթեայ համարաւ,
Եւ զլիարկը հոյակապ գոր Մարշան մատուցանէ:
Ահա այսպէս պէտք է որ աւանդութեան մէջ մընայ:
Եւ երբ ի սեմն երեցաւ իրլանդացի իւր բըժիշկ,
Ուսկից կ'զգար իւր սիրուին մարտիրոսը փառաւոր,
Բաւ գրեթէ զուարթօրէն. — Եկէ՛ք, կ'ուզեմ ելնել դուրս:
Սակայն շուրջը Լոնգվուդի, ուր կը հասնի, զինքն ուտէ
Վանդակին մէջ բանտարկուած բարձրաթրոխն այս արծիւ,
Տրտում տխուր այն վայրն է և հեղձուցիչ և ճնշող,
Խիժենիներ ազազուն, փռշոտ հնդիկ — թզենիք,
Որուն ի ծայրն անդ հեռուն ծովը ծրփայ վէտ ի վէտ,
Որ կենդանի պարզունակ մ'իրեն թուի իւր բանտին:
Ամենուրեք կը գտնէ կայսրը զինուոր մը կարմիր
Հրուանդանի մը ծայրէն. և երբ հեռուն տեսնէ ծով,
Մարտական նաւ մ' հոն պատրաստ շրջան կ'ընէ հանապազ.
Անհանգիստ է գոգցես թէ գերիէն, իր ժուռ զաւլէն,
Եւ միշտ առ ինքն ուղղած է թնթանօթներն իրեն կարճ:
— Մտնենք բժի՛շկ, կ'ըսէ նա, կարծրը շեշտով մը փութկի,
Ձի ինքն իր մէջ ամփոփուի, տրտում ճակատն ի խոնարհ,
Ձոր մերթ ա՛յնքան արքայից շքեղութեամբ տուաւ ցոյց:
Նապոլէոն հոն յանկարծ թուղթ մը տեսնէ՛ մէջ խոտին,
Նրամակ մ'էր այս կորսուած և կրնիքը փրցուած.

— Վերջո՛ւր բժի՛շկ, նամակ մ'է, տեսնե՛նք մէջը ինչե՛ր կան .
 Գաղտնիքը զիս կը խեղդէ, որով զմեզ պարագրեն .
 Այս միջոց մ'է որով մենք լուրեր կ'առնենք Եւրոպէն,
 Այո՛, զայդ ինձ թարգմանէք և ես կ'ուզեմ գիտնալ թէ
 Պարսաւանաց տետրակաց նըման ես սեւ նկարուած եմ,
 Ճիւղաղ մը աւելի, որ մանուկներ կը լափէ
 Կող տայ անյագ ատամով քաշած տարած յիւրն ի սոր .
 Եւ յետոյ մենք այս կերպով ամբողջ ժամ մը կ'սպաննենք,
 Ըսաւ, մտաւ ի Լոնգվուդ, ժայռի մ'վըրայ այս պիղծ խուց .
 ()՝ Մէքրան կը տանի իր սենեակը ննջելիք,
 Կ'իյնայ վրայ թիկնաթոռի մ' խաչաձեւած նուր ծոնգերն :
 Եւ ինչ տիւր բնակարան . պատէն զոյգ մը կարաբին
 Կը ժանգոտին կը զուլնան, երկիրս չունի երէներ .
 Խոնաւութիւնն փրցունէ, փրտեցնէ պատին թուղթ .
 Հոս ամեն բան այլայլի, հոս ամեն բան խանգարուի :
 Իսկ դառնալով կարասեաց, ահա ցուցակ մը չնչին .
 Հին բազմոց մը խիստ մաշուած շփուձներով կոնակի .
 Աւտերլիժէ մընացած անկողին մը խիստ նեղլիկ .
 Բարակ ոչինչ վարագոյրը զայն կը ծածկեն ողորմուկ,
 Յորում այս մեծ բանտարկեալն ողջ գիշերներ լուացրնէ :
 Մի քանի գիրք ցան և ցիր, չորս կամ թէ հինգ ծրխատուփք,
 Որք քիչ յետոյ արքայի բարեկամաց են ընծայ .
 Անկիւն մ' նետուած կօշիկներ . եռոտանոյ մ'վրայ են
 Դեղաշիշերն բժիշկին, զոր անգոսնէ ըսկպտիկն .
 Եւ բեւեռն կախուած է բղբենգոտն իւր գորշագոյն
 Որ տայ ածել իւրեան յուշ ինչա, Վագրամ, Շանպօթէր .
 Եւ ձեռնոցներ եզծուած բաց դարանի մ' մէջ նետուած .
 Գրծուծ գըրոցի մը մէջ խառն թուղթեր և քարտէս մ'... :
 Երիտասարդ Բոնապարտ ասկից լաւ տուն կը բնախէ՛ր,
 Երբ Կոնտիի քարափում թշուառութիւնն հալածէր,
 Երբ փոխ կ'առնուր Տալմայէ Լուդովիկեան մի ոսկի :
 Այս աղքատը տիրացաւ Եւրոպի, ո՛վ ճակտիգիր... :
 Սակայն հոն վեր ջերմոցին յայս ողորմուկ միջավայր
 Կայ մէկ սիրուն ատարկայ գերւոյս համար այս դժբաղդ,
 Որ կիսաստուած մը դարձաւ իրեն յետին այս հուսկ գանձ,
 Զոր այս մարդը կը պահէ գուրգուրանօք իրեն մօտ .
 Տղու մ' պատկեր գեղանի և Հոռվմի արքային :

Ք

— Առաջ, սակայն կ'ըսէ կայսր, զոկտո՛ր, հասցէն տե՛ս ինչ է .
 Պէտք է գիտնալ թէ արդեօք ո՞վ է որ զայն կորուսեր .
 — Պօզ Սիդնիյ, յիսուներեք երորդ գունդին կապիտէն :
 — Շատ լաւ կարդացէ՛ք :
 — « Ամուսինդ իմ սիրելի՛, քեզ կը խորհիմ, սիրեմ քեզ
 Աքսորիդ մէջ որ այնքան զաւկէդ հեռի կաս և՛ ինձմէ .
 Ո՛հ երբէ՛ք մի՛ կասկածիր, ես քեզ սիրեմ, քեզ խորհիմ .

Բայց թէ որ իմ մտքին մէջ յիշատակը թու լինի
 Գորովալից քաղցըր խոր, ամեն օրեր, ամեն ժամ
 Մերթ աւելի տառապիմ, ինչպէս ափսոսնա և այսօր:
 Աւասիկ օր իմնդեան թախիծըս պէտք էր ծածկէր.
 Բայց ո՛րքան և փափաքիմ, ես չըպիտի կարենամ.
 Երկինք խաւար, և ձիւնէ. տխուր կ'անցնի մեզ համար
 Որ Ծնունդին չըլլաւ մօտ փոքրիկ Դիքին, Սիրելւոյդ:
 Ներողութիւն, լաւ գիտեմ, աւելորդ է մեր տրտունջ.
 Եթէ դու չի կամեցար տանիլ զիս հետդ այդ կղզին,
 Ես գիտեմ այդ վայրերուն պատճառն ամեն սրտառուչ.
 Մանչուն համար քու փոքրիկ այդ կլիմայէն վախճայիր
 Առ այս տուիւր որոշում օտարութեանդ այս երկար,
 Վասն յառաջ գնալու որ ապրէինք քիչ մը դիւր:
 Գո կ'ինք քեզի չի բերաւ որպէս օտիտ գոյք և ինչ.
 Այլ իր սիրտը լի սիրով բերաւ և գեղ մը վտիտ:
 Բայց դարձեալ եւս ներէ ինձ, եկեղեցւոյ լսեմ զանգ.
 Նա գողցեալ թէ ինձ թուի յանդիմանել կշտամբել՝
 Թէ է՛ր տխրիմ ես այսօր, Մանուկ-Աստուած երբ ծնաւ:
 Հիմա քեզի ըսեմ որ թախիծըդ քիչ փարատի,
 Ծնունդն ինչպէս կատարել պատրաստուիմ, աւասիկ:
 Մենք կ'ուզենք որ Դիք և ես, դու եւս լինիս տօնակից.
 Եւ որպէս զի բնակարանն ըլլայ շքեղ զարդարուն,
 'Իաւարփուշով պիտ' պճնենք՝ հատիկներով իր կարմիր՝
 Լուսանըկար քու պատկերն, առնենք պիտի ի մեր մէջ.
 Այսպէս լինինք պիտի մենք համախմբեալ ընտանեօք,
 Այնպէս չէ՛ իմ սիրելիս. վառարանին մէջ յետոյ
 Շատկէկ կըրակ կը շինեմ, որպէս զի այս երեկոյ
 Տաքուկ և քաղցըր լինի մտերմութեանս այս գիշեր.
 Եւ երբ առնէ Դիք զիւր թէյ և իմ շինած խմորեղէն,
 — Ութը տարին լրացնէ, մեծ է նայած տարիքին, —
 Այս պատկերին ընդ առաջ պիտ' հաւաքուինք մենք երկուքս.
 Ծնգացըս վրայ կ'առնեմ ես գորովանօք որդեակն իմ,
 Եւ պատկերիդ վրայէն մեզ ժպիտներ կ'արձակես,
 Ու երեքս ալ հոն մէկտեղ պիտի մընանք միասին:
 Սիրելիդ իմ, մեր Դիքը, լաւ գիտես քեզ կը նմանի.
 Աստուած խնդիրքս ընդունեց, սիրելիդ իմ ամուսին.
 Քանի՛ երթայ քու կապոյտ աչքերն ունի երկինքի,
 Քանի՛ երթայ գեղեցիկ մազերդ ունի գանգրալից.
 Եւ քու պատկեր տեսնելով կ'ըսէ ինձի մտադիր.
 — Մայրիկ, օր մը երբ մեծնամ, զինուորական պիտ' ըլլամ»: —
 Սովորաբար մայրերը կը սահմուկին լսելով
 Որ ռազմական բնագրի յարին իրենց զաւակներ.
 Սակայն քու կինն այնպէս չէ, իմ սիրական կապիտէն.
 Գու սիրեցեալ փոքրիկը վատահ եմ քաջ պիտ' ըլլայ.
 Եւ ես հպարտ եմ առ այս և լիայոյս ես ապրիմ՝
 Որ իր հօրը նըմանի և ծառայէ իր երկրին»:



Շարժումով մը կ'ընդմիջէ կայսրը թուղթին ընթերցում.
Ոտքի վրայ կեցած է, խորհի զաւակն, — ո՛վ տանջանք, —
Յեռքերն ետին կապած է, գլուխը կախ, մեծաքայլ
Քայլէ. Վիեննա ինչ ըրին արդեօք արքայն Հըռովմի.
Բան չի գիտեր, և սակայն պէտք է յիշել ինքն իրեն,
Որ խեղճ փոքրիկն արտասուէր, բազուկները վեր վզին
Մէնըվալին խանդակաթ, և ճուար « Մայրիկն ո՛ր է »:
Երբ վանեցին իր միակ բարեկամներն որք եկած
Հասած էին Ֆրանսայէ բարեկամներ իրեն մօտ,
Օ՛ր Մէարա այս անգութ բիրտ կեղեքման ընդ առաջ
Համըր դառնայ և չ'իշխեր աչքերը վեր վերցնել:
Սակայն կայսրը կը նստի և կ'ըսէ իր բժիշկին.

— Շարունակեցէ՛ք:

Իրլանդացին վերակսի.

« Բերնուց զիտեմ քու նամակ, որն որ ինձի կ'իմացնէր
Թէ՛ քու պետերն հաճեր են խոստանալ որ տարիէ մ' »

— Ափսոս տարի՛ մը եւրս բացակայ —

Պիտի դառնաս մերին մօտ աստիճանաւ Մայորի.
Կերուհիին թում նոյն իսկ որդիդ տեղեակ կը լինի,
Թէ՛ նոր արդեօք ինչ նշան պիտի կրէ համազգեստդ.
Բայց ես ընդ միշտ մեծապէս մտահոգ եմ այդ կղզւոյն.
Ժանտ թունաւոր իր օդէն Աստուած առողջ քեզ պահէ՛ր.
Քեզի համար աղօթեմ պիտի, աէ՛ր իմ, այս գիշեր.
Քու պզտիկն ալ աղօթէ իւր պատուական հօր համար:
Բէթլէմի Մանկիկը որ այսօր իսկ ծընաւ նոր,
Մանուկներու իր նըման պիտի լսէ մանաւանդ.
Եւ քրիստոնեայ մեր հոգեաց բոլոր խանդով աղօթենք
Դիք և ես՝ որ ողջ առողջ վերադառնաս ի մեր գիրկ.
Եւ մենք պիտի աղօթենք հոգ բոլոր զտնտուղաց
Համար, որոց սպաննայ այդ կլիմայն թունաւոր:
Նոյն իսկ. . . այո՛ այն չարեաց դէմ զոր հասցուց Անգղիոյ,
Այսօր յորում երեցաւ խոստացեալ Տէր մեր Փրկիչ,
Պարտինք թողուլ և ներել մեր թշնամեաց բովանդակ.
Այո՛ պիտի աղօթենք սուրբ Հեղինեայ գերւոյն սակա »:
Ընթերցումը կ'ընդհատուի, ատելութիւնը գիտէ,
Զոր ամեն սիրտ անգղիացի Կրօսիքացւոյն կը տածէ:
Սակայն պոստած յոնքերը, կայսրը կ'ըսէ.

— Եւ յետո՛յ:

« Իր փառքն և իւր մեծութիւն, իր անկում և իւր հանճար
Հաւատա՛ ինձ՝ բան մը չ'են տառապանաց մէջ անհուն,
Զոր ինձ առթէ դժբաղդիդ ճակատագիրն իւր դժիւմ:
Մեր ընտանեաց մէկ բաստն է որ ծընաւ յիս այս բնագոյ.
Անկեղծօրէն մեղքընամ և ցաւ կ'զգամ այս մարդուն:

Աւստրուհին կը խորհիմ և փոքր արքայն Հոովմի.
Կնոջն համար այնպէս է որպէս մեռեալ մ' կենդանի,
Եւ կ'ուզէին որ ատուէր նոյն իսկ իրեն զաւակէն.
Ու զինքն այսպէս չարչարեն, ճշմարիտ ըստ անիրաւ.
Այս Բնչ դառն Գողգոթա, զաւկէն միամօր չունի լուր.
Այս դժբաղին համար ալ մեր փոքրիկը ազօթէ » :

Պ

— Բաւական է, Օ' Մէարա — ըսաւ ձայն մը խստագին.
Կոկորդին մէջ հեծկտանքն զկայ առնու դողդոշուն.
Արմուկները ծնգաց վրայ, ճակատն ու զլուխ խոնարհած
Ջեռաց մէջը առած է կայսրը յուզուած խորապէս,
Սիրոյն համար զոր իրեն այս զօրական անծանօթ
Ներշնչեց և պատեց սիրտն մահացընող մի վիշտով:
« Եւ իր որդին զինք սիրէ, հաւատարիմ է իւր կին »,
Ըսաւ այս մեծ տարագիրն անյուսութեան խորն հասած:
Սակայն յայնժամ յանկարծուստ զի մի՛ գուցէ տեսնուէր
Յուզումն որ մեծ հերոսիդ անվայել ինչ կը թուէր,
Իրանդացի բժիշկին նշան ըրաւ մէկ ձեռքով
Դադրեցնել ընթերցումն և հեռանալ իր քովէն.
Եւ ոչ ոք զայս տեսած չէր,

— Նապոլէոն կ'արտասուէր:

ՖՐԱՆՍՈՒԱ ԿՈՊԷ

Թարգմ. ԽԱՅԻ Բ. ՍԱՐԱՆՅԱՆ
(Դապրէթ)

Մ Ա Ն Օ Թ Ո Ւ Թ Ի Ն

- ՍԵՆՏ-ԵԼԷՆ. — Սրբուհի Հեղինեայ անունով Ատ-
լանտեանի մէջ անգղիական կղզի Ափրի-
կեան, ուր Նապոլէոն Բոնապարտ արտօր
դրկուեցաւ Անգղիոյ պաշտպանութեան յանձ-
նուելէ յետոյ (1815-1821):
- Օ' ՄԵԱՐԱ. — (Բէրրի Եղուարդ) անգղիացի վի-
րաբոյժ և կայսեր բժիշկ ի Ս. Հեղինէ:
- Ա ՎԱՅ. — (Էմմանուէլ) Ֆրանսացի պատմագիր
որ ընկերացաւ Նապոլէոնի և Յիշատակ-
ները գրեց:
- ԼՈՆԳՎՈՒՒ. — Տեղի բնակութեան Նապոլէոն կայ-
սեր ի սուրբն Հեղինէ:
- ԱՍՏԵՐԼՈՒՑ. — Մորավիայի գիւղ, ուր Նապոլէոն
զարկաւ Աւստրիացիներն և ռուսերը (1805)
և փառաւոր յաղթանակ տարաւ երկու կայ-
սերց վրայ:
- ԻԵՆԱ. — (Սարս վէյմար) գերմանական քաղաք,
որուն մօտերը Նապոլէոն յաղթեց Պրու-
սիացւոց (1806):
- ՎԱԳՐԱՄ. — Վիէնայի մօտ աւստրիական գիւղ
մ'է, ուր Նապոլէոն, կարող արքիդուքսին
վրայ հռչակաւոր յաղթանակը տարաւ (1809):
- ԵՆԱԳՈՒԹԻ. — Ֆրանսական գետակ Մառնի մօտ,

- ուր Նապոլէոն զարկաւ ռուսերն ու պրու-
սիացիները (1814):
- ՏԱՄԱ. — (Ֆրանչիսկո Յովսէփ Տալմա) Նա-
պոլէոնի նախասիրած ֆրանսացի թատեր-
գակն էր, որուն մեծամեծ պարգեւներ շնոր-
հեց:
- ՀԹՈՎՄՆ ԱՐԳԱՑ. — Նապոլէոն Բ. (Ֆրանչիսկոս
կարող Յովսէփ Բոնապարտ) որդի Նապո-
լէոն Ա.ի և Մարի-Լուիզայի, ծնեալ ի Պա-
րիզ ի պալատն Տիւլլերի, իր ծնած ըռ-
պէէն Հոովմի թագաւոր հռչակուեցաւ, և
խորհրդարաններէն կայսր ճանչուեցաւ Նա-
պոլէոն Ա.ի երկրորդ հրաժարման միջոցին.
մինչև իր մահը ապրեցաւ Շօնբերուն դը-
ղեակը իր պապուն քով Աւստրիոյ Ֆրան-
չիսկոս Բ.ի մօտ՝ Բէյաւադի դուքս անու-
նով (1811-1832):
- ԱՍՏԵՐԼՈՒՑ. — (Մարի-Լուիզա) Ֆրանչիսկոս Բ.
Աւստրիոյ կայսեր դուստր և ամուսին Նա-
պոլէոն կայսեր, յամին 1810: Բոնապարտի
մահէն յետոյ Նէյթերգ կոմսին կին եղաւ,
ապա Թոմթէլ կոմսին: Մարի-Լուիզա
այսպէս պահեց իր օգոստափառ ամուսնոյն
սուգը...

Մ. Թ.